

## **ՈՉ ՍՏԱՆԴԱՐՏ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ**

ԱՊՊԱ ընդհանուր պայմանների համաձայն՝ անկախ այն հանգամանքից, թե որքան են կազմում ավտոմեքսի հետևանքով տուժողին պատճառված անձնական և գույքային վնասները՝ տուժողին հատուցում կարող է տրվել ոչ ավել, քան ԱՊՊԱ պայմանագրում նշված ապահովագրական գումարը: Ապահովագրական գումարն ապահովագրական պատահարի դեպքում ապահովագրական ընկերության կողմից տուժողին վճարման ենթակա ապահովագրական հատուցման առավելագույն չափն է:

ԱՊՊԱ-ի գծով **ապահովագրական գումարի** մեծություններն են՝

### **1. Անձնական վնասների** դեպքում՝

- ❖ մեկ ապահովագրական պատահարի համար՝ **33 000 000** ՀՀ դրամ
- ❖ յուրաքանչյուր տուժողի համար՝ **3 300 000** ՀՀ դրամ

### **2. Գույքային վնասների** դեպքում՝

- ❖ մեկ ապահովագրական պատահարի համար՝ **18 000 000** ՀՀ դրամ
- ❖ յուրաքանչյուր տուժողի համար՝ **1 800 000** ՀՀ դրամ

Եթե վնասներ են կրել մեկից ավելի անձինք, և այդ վնասների ընդհանուր գումարը գերազանցում է ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարը, ապա նրանցից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցումները վճարվում են վնասների ընդհանուր գումարում նրանց պատճառված վնասների չափերին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարի սահմաններում: Ընդ որում յուրաքանչյուր տուժողին վճարման ենթակա գումարը չի կարող գերազանցել ըստ յուրաքանչյուր տուժողի սահմանված ապահովագրական գումարը: Այն դեպքում, երբ տուժողներից մեկի (մի քանիսի) համար, համամասնորեն հաշվարկված գումարը (գումարներից յուրաքանչյուրը) գերազանցում է ըստ յուրաքանչյուր տուժողի սահմանված ապահովագրական գումարը, ապա գերազանցող մասով (մասերով) հատուցվում են մյուս տուժողներին պատճառված վնասները այդ վնասներին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր տուժողի սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

### Օրինակ 1

Տեղի է ունեցել ԱՊՊԱ պատահար, որի հետևանքով հատուցման ենթակա անձնական վնասներ է կրել 4 անձ:

- 1-ին տուժող՝ 3,300,000 ՀՀ դրամի վնաս,
- 2-րդ տուժող՝ 29,700,000 ՀՀ դրամի վնաս,
- 3-րդ տուժող՝ 29,700,000 ՀՀ դրամի վնաս,
- 4-րդ տուժող՝ 3,300,000 ՀՀ դրամի վնաս:

### Հատուցման գումարը կհաշվարկվի հետևյալ կերպ.

Ավտովթարի հետևանքով պատճառված ընդհանուր վնասը կազմում է 66,000,000 ՀՀ դրամ: Քանի որ անձնական վնասների առավելագույն գումարը յուրաքանչյուր պատահարի համար սահմանված է 33,000,000 ՀՀ դրամ, ապա անհրաժեշտ է հաշվարկել այս դեպքում յուրաքանչյուր տուժողին վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը:

Հաշվարկենք յուրաքանչյուր տուժողի պատճառված վնասի չափի տեսակարար կշիռը վնասի ընդհանուր գումարի մեջ՝

- 1-ին տուժող – տեսակարար կշիռը 5 % է ( $3,300,000 / 66,000,000 * 100\%$ )
- 2-րդ տուժող - տեսակարար կշիռը 45 % է ( $29,700,000 / 66,000,000 * 100\%$ )
- 3-րդ տուժող - տեսակարար կշիռը 45 % է ( $29,700,000 / 66,000,000 * 100\%$ )
- 4-րդ տուժող - տեսակարար կշիռը 5 % է ( $3,300,000 / 66,000,000 * 100\%$ )

Յուրաքանչյուր տուժողին վճարվող ապահովագրական հատուցման չափը կկազմի՝

- 1-ին տուժող՝ 1,650,000 ՀՀ դրամ ( $33,000,000 * 5\%$ )
- 2-րդ տուժող՝ 14,850,000 ՀՀ դրամ ( $33,000,000 * 45\%$ )
- 3-րդ տուժող՝ 14,850,000 ՀՀ դրամ ( $33,000,000 * 45\%$ )
- 4-րդ տուժող՝ 1,650,000 ՀՀ դրամ ( $33,000,000 * 5\%$ )

Բայց, ինչպես տեսնում ենք, 2-րդ և 3-րդ տուժողներին վճարվող ապահովագրական հատուցման գումարը գերազանցում է անձնական վնասների համար յուրաքանչյուր տուժողին հատկացվող ապահովագրական գումարի առավելագույն չափը՝ 3,300,000 ՀՀ դրամը՝ 11,550,000 ական ՀՀ դրամի չափով:

Հետևաբար, 23,100,000 ՀՀ դրամը կհատուցվի 1-ին և 4-րդ տուժող անձանց՝ իրենց ընդհանուր վնասների մեջ յուրաքանչյուրի վնասին համամասնական չափով (1-ին և 3-րդ տուժող անձանց ընդհանուր վնասը 6,600,000 ՀՀ դրամ է, յուրաքանչյուրինը ընդհանուրի մեջ 3,300,000 ՀՀ

դրամ կամ 50%): Արդյունքում 23,100,000 ՀՀ դրամը պետք է բաշխվի հավասարաչափ 1-ին և 4-րդ տուժող անձանց միջև, յուրաքանչյուրին՝ 11 550 000 ՀՀ դրամ: Սակայն, քանի որ այս դեպքում 1-ին և 4-րդ տուժող անձանց վճարվող հատուցման չափը կազմում է 13,200,000 ՀՀ դրամ (1,650,000 + 11,550,000) և գերազանցում է անձնական վնասների համար յուրաքանչյուր տուժողին հատկացվող ապահովագրական գումարի առավելագույն չափը՝ 3,300,000 ՀՀ դրամը, 1-ին և 4-րդ տուժող անձանց վճարվող հատուցման չափը կկազմի 3,300,000 ՀՀ դրամ:

## **Օրինակ 2**

Տեղի է ունեցել ԱՊՊԱ պատահար, որի հետևանքով 11 մեքենա է վնասվել՝ ներառյալ մեղավոր վարորդի մեքենան: Մեղավորություն չունեցող վարորդների մեքենաներից յուրաքանչյուրի վնասը 2 մլն ՀՀ դրամ է, ընդհանուր վնասը՝ 20 մլն ՀՀ դրամ:

### **Հատուցման գումարը կհաշվարկվի հետևյալ կերպ.**

Քանի որ մեկ պատահարի հետևանքով գույքային վնասների համար ապահովագրական հատուցման առավելագույն գումարը սահմանված է 18 մլն ՀՀ դրամ, ապա միայն այդքան գումարի սահմաններում կարող է կատարվել հատուցում: Քանի որ յուրաքանչյուր մեքենայի վնասը հավասարաչափ է, նշանակում է համամասնությունը 10% է՝ մեկ վարորդի հաշվով, հետևաբար յուրաքանչյուր տուժող վարորդ կստանա 18 մլն ՀՀ դրամի հատուցման 10%-ը, այսինքն՝ 1,800,000 ՀՀ դրամ: